

«29» 06



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) արտաքին կապերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի (այսուհետ՝ Նախարարի) հրամաններով:

3. Վարչությանը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Վարչությանը կանոնադրությունը, կառուցվածքը հաստատում /փոփոխում/ է Նախարարը:

5. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության խնդիրներն են.

1) համագործակցել օտարերկրյա պետությունների և միջազգային մշակութային կազմակերպությունների իրավասու մարմինների հետ.

2) մասնակցել միջազգային մշակութային կազմակերպությունների աշխատանքներին.

3) նպաստել մշակույթի բնագավառում օտարերկրյա պետություններ հետ տարբեր ծրագրերի իրականացմանն ու զարգացմանը.

4) իրականացնել մշակութային գործընթացների ուսումնասիրություն, կատարել ամփոփումներ և ներկայացնել առաջարկություններ:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցությունը.

2) մշակում է համագործակցության համաձայնագրերի, հուշագրերի, արձանագրությունների, փոխանակումների գործնական ծրագրերի նախագծեր, ապահովում է դրանց ստորագրման և վավերացման համար անհրաժեշտ ընթացակարգը.

3) համակարգում է միջազգային միջոցառումների անցկացման հետ կապված կազմակերպական և արարողակարգային խնդիրների ժամանակին և անխափան կատարումը.

4) աջակցում է ոլորտում գործող պետական և հասարակական կազմակերպությունների միջազգային համագործակցությանը, արարողակարգային և հյուպատոսական խնդիրների իրականացմանը՝ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով.

5) իր իրավասությունների սահմաններում նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ մշակում է պետական ծրագրեր.

6) իր իրավասությունների սահմաններում համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ կազմում է ՀՀ մշակույթի նախարարության կողմից հրավիրված օտարերկրյա պետությունների պաշտոնական պատվիրակությունների կամ հյուրերի այցելության ծրագրերը, ապահովում դրանց իրականացումը, ինչպես նաև՝ այցելությունների հետ կապված արարողակարգային հարցերը.

7) նպաստում է սփյուռքի հետ մշակութային փոխհարաբերությունների զարգացմանն ու կատարելագործմանը.